ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Ք. Երևան, 27 սեպտեմբերի, 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցում են՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ք. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Բ. Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների (Բ.Պիպոյան, Մ.Սանդոյան, Մ.Բեգլարյան, Ա.Առաքելյան) անդամությունը երկարաձգելու վերաբերյալ

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի նիստի օրակարգային հարցի վերաբերյալ անդամները ներկայացրել են հետևյալ դիրքորոշումները՝

- **Նախագահ.** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարոն Բաբկեն Պիպոյանը շատ հազվադեպ է մասնակցում նիստերին, առաջարկել է վերջինիս մասնակցությունը չերկարացնել:

- **Բաբկեն Պիպոյան.** Արձանագրել է, որ իր կարծիքով վերջին ժամանակահատվածում խորհրդի աշխատանքների արդյունքում բովանդակություն չի գեներացվում և մասնագիտական փորձաքննություններն իրականացվում են զուր: Ելնելով վերոգրյալից՝ Խնդրել է իր խորհրդի անդամի լիազորությունների երկարացման հարցը օրակարգից դուրս թողնել և չերկարացնել: Միաժամանակ հույս է հայտնել, որ խորհրդի նոր անդամի կողմից բարձրացված հարցերը՝ որոնք կլինեն հիմնավորված, կքննարկվեն ավելի բովանդակային:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 9 կողմ ձայներով որոշվեց՝

Երկարաձգել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների Մարինա Սանդոյանի, Մելինե Բեգլարյանի և Արսեն Առաքելյանի անդամությունը և ընտրել Խորհրդի նոր անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ